


3821

778.5

---

S-44

Հ Ա Յ Կ Դ Ն Ո



- 
- 

Խ Ա Զ -- Փ Ո Ի Շ .

Դասիտ Յ Սուրահից

ԿԻՆՈ -- ՆԿՍՐ

20 AUG 2013

25 OCT 2010

778.5

S-44

# ԽԱԶ-ՓՈՒՇ

ՂԱՍԻՏ Տ ՍՈՒՐԱՅԻՑ

Ըստ ԱՐՇԱԼՈՒՅՍ ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՅԱՆԻ  
" համանուն զեպի

Սցենարիստ՝ ԱՐՇ. ՏԵՐ-ՀՈՎՆԱՆՅԱՆԻ

ԳՐ. ԲՐԱԳԻՆՍԿՈՒ

Ռեժիսոր՝ Հ. ԲԵԿ - ՆԱԶԱՐՅԱՆ

Ոպերատոր՝ Ն. ԱՆՈՇՉԵՆԿՈՒ

31/39

### ԳԼԽԱՎՈՐ ԴԵՐԵՐՈՒՄ

- Նագիր . . . . . Մ. ԴՈՒԼԳԱՐՅԱՆ
- Ռիզա . . . . . Հ. ՆԵՐՍԵՍՅԱՆ
- Սեյիդ Հաբիբուլլա Մ. ՋԱՆԱՆ
- Ահմադ . . . . . Տ. ԱՅՎԱԶՅԱՆ
- Սադր-Ա՛գամ . . . . . ԽԱՉԱՆՅԱՆ
- Բեյլար-Բեյ . . . . . Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

Անգլիական դեսպան Ա. ՅԱՆՉՍԻ

Մասսաչյական տեսարաններում մասնակցում են 1000 հոգուց ավելի:

1890  
1891

Նապոլեոնի կազարը՝ ծագող արևի յերկրի՝ Իրանի շահնշահը դրամի խիստ կարիք դարձավ՝ շարունակելու իր շտալ կյանքը և Յեվրոպայում ճանապարհորդելու՝ 1890 թվին ծխախոտի առ ու ծախքի մենաշնորհը վողջ յերկրում՝ հանձնեց անգլիական մի ընկերության: Այդ մենաշնորհն ոտանայու համար տարիներ շարունակ անգլիական և ուստական քաղաքականությանը պայքար էլին մղում, սակայն ի վերջո հաղթողը հանգիստացավ անգլիական դեսպանը, փորովհետև նա կարողացավ տվելի մեծ գումար «փեշքեշ» տալ Սադր-Ա՛գամին՝ առաջին մինիստրին, փոքր փաստորեն յերկրի միակ կատափարոզն էր:

Սադր-Ա՛գամի առանձնատեսչակում տեղի յե ունենում այդ ամօթարեր ստեղծուրը, իսկ Պարսկաստանի գյուղացիությանը, կիսաճորտական վիճակում, հաղել-հաղ կարողանում է մի կտոր չոր հաց ձեռք բերել: Իսկ այդ տարին, գժբախտաբար, յերաշտ էր. ցորենի արտերը արևից իսանձվել էլին: Միակ հույսը մնացել էր ծխախոտը:

Ինչպես ամեն տարի, այս անգամ էլ թեհրանի վաճառականներն իրենց քարավանով յեկել էլին Շիրազի շրջանի մեծ գյուղերից մեկը՝ ծխախոտ գնելու: Ամիսներ շարունակ խաղաղ նիրհող քարավանսարան կյանք է առել. ամեն կողմ աղմուկ է, փազվուր, գործարք: Գյուղացիները էշերին բարձած, ուտերին առած, քարվանսարա էլին կրում իրենց ծխախոտի հակերը, փոխելու ալյուրի, ցորենի, բրինձի և այլ անհրաժեշտ մթերքների հետ: Յերիտասարդ ու կենսուրախ Ռիզան էլ աշտեղ է շտապում: Այնտեղ է նաև Սեյիդ Հաբիբուլլան՝ գյուղի ու շրջանի խոշոր կալվածատերը: Յեվ հենց այն իսկ բուպելին, յերբ սեյիզն ու վաճառականը միմյանց ձեռք են սեղմում, վարդեռ նշան կայացած առևտրական համաձայնության, յերբ գյուղացիներից

չառերն իրենց ազրանքներն են հանձնում և ուզումը ստանում, հայտնվում և չափ ճառչին և հայտարարում մենաշնորհի Ֆերմանը:

Այնքան անսպասելի ու ցնցող և այդ հայտնու թյու- նը, վեր մի ակնթարթ գյուղացիությունը չի հասկա- նում տեղի ունեցածը և յերբ վաճառականներն այլևս դադարում են շարունակել առևտուրը, յերբ այլևս նը- բանք հրաժարվում են վերցնել ծխախոտը, այդ բո- պեյին միայն նրանք բարձրում են դրության վողջ ծան- թությունը, գալիք թշվառությունների և դժբաղդու- թյունների գատկերը:

Հուզմունքը տիրում և բուրբին: Սովը, թշվառու- թյունը, վճարելիք հարկերը նեղ ողակով չղթարում են նրանց, սեղմում: Նրանք խեղդվում են, սակայն փրկու- թյան յեղք չկա. միակ հույսը ինքնուրույնը:

Ռիզայի ծերունի հայրը տեսնելով բեռնած կշի հևա փերադարձնող փորդուն, տարակուսանքի մեջ և: Վոր- դու հազարդած լուրից նա հուզվում և, չփոթվում:

Հաց չկա, ծխախոտն էլ չի ծախվում: Սովը կամուց- կամաց վրա յե հասնում: Այդ անել դրությանն աշակ- ցում և սուսաց կոնսուլը, վորը ծխախոտի մենաշնորհն ստանալու հույսը կորցրած այլևս, հազարդում և իր կա- ուղաբարությանը, կարկադրելով գաղարեցնել Պարսկաս- տան հաց ներմուծելը:

Յեզ գյուղացիները սահագված են գլխել սեյիզի «վողորմությանը», վորը, բարի գործ կատարելու ա- նունով, ոգտվում և առիթից, գյուղացիության ծխա- խոտը չնչին արժեքներով իր մոտ ամբարելու:

Ու վորպետղի ամեն ինչ կատարյալ լինի, հայտնվում և գյուղատեր արան մի խումբ Ֆերրաչներով հավա- քելու իրեն հասանելիք տասանորդը և կառավարական հարկը: Գյուղացիությունը վոչինչ չունի. վճարելու հնարափորություն չկա: Սակայն աղային ինչ փույթ: Աղան ու կառավարությունը պիտի առանան իրենցը:

Յեզ ֆերրաչները հմուտ վարական չների նման անև-տուն ընկած խում են այն ամենը, ինչ վոր փոքրիչատե ար- մեք և ներկայացնում ալյուրի մնացորդ, սերմացու ցորեն, հազուստ, գորդ ու կարողնա:

Ռիզան ու հայրը բախում թաղցնում են ունեցած միակ կարպետը: Բակը մոտավոր Ֆերրաչը նկատում և խում և: Հայրն ազաչում և, Ռիզայի դեմ քր մոտայվում և իսկ Ռիզայի յերիտասարդ կինը՝ գեղեցկուհի Նադիրը վազում և, կախվում կարպետից, աշխատում և սղա- սել: Ֆերրաչը ձին թչում և, յետևից քարչ տալով կար- պետից կախված Նադիրին: Մերունին վազում և դեպի Սիլան, յնկնում նրա վտարերը, համբուրում զգանցքը, կոչիկները, արքայում և իր ծերությունը ինաչել: Բայց անասրբեր և նազան, հրամայում և հեռացնել իրեն ձան- ճրացնող ծերուկին: Ֆերրաչը հարձակվում և, բաչում և նրան ու մտրակի հարվածներն իջնում են թշվառ ծե- ինունը դեմ բին, թիկունքին:

Ռիզայի ներսը փաթարկում և, նա այլևս չի կարն- գանում գտնել իրեն ու մի վտախուսով թուշկով գեպի ֆերրաչը, դամակի հարվածով գեպին և տասարում նը- բան: Ռիզայի այդ արարքն այնքան անսպասելի, նույն- իսկ այնքան անյերեկակաչի յե մի «ոտայի» կողմից, վոր բոլորը մի սրահ բարանում են: Ու ընդհանուր այդ գրությունից ոգտվելով, բարեկամական ձեռքերը յետ են բաչում Ռիզային ու փախցնում: Ռիզան, փախչում և, Նադիրը սոգկմնահար վազում և նրա կողմը: Չաղբան ընկնում և գլխից, բացվում և նրա գեղեցիկ դեմ քր: Սե- յիզ Հարիրուլան, վոր այդ բուրեյին հայտնվում և բար- վասարայի դարպասում, տեսնում և նրա դեմ քր ու ա- յլեկցու վաճաչոտ ցանկությունն անմիջապես տիրում և նրան: Ռիզան փախչում և, Ֆերրաչները հեռանալում են: սակայն ի գուր: Աղան կատարում և: Մերունի հորը քարչ են տալիս նրա մոտ: Կապում են Փառախայում և ճիպոտի անխնա հարվածներն իջնում են նրա մեկի փա- յեթին:

Ռիզան թագնութում և Սեյիդի աչում . նա բոտո և մանուս : Սեյիդը չի կարող նրան գուրս սնել . բասար սրբազան և , վոչ վոբ չի կարող խախտել այն : Սակայն Սեյիդին հարկավոր և Ռիզայից ազատվել ընդհանրապես : Նազիրը շատ և գուր յեկել նրան : Յեվ աճա , բարեկամի դիմակ հագած , հոբ և կնաջ խնամքն իր վրա առնելով , նա խորհուրդ և տալիս Ռիզային փախչել թեհրան , ուր նա ավելի հեշտությամբ կարող և ծածկվել , մինչև վոր դեպքը կհնանա , կմոտացվի :

Դեպքերը հաջորդում են մեկը մյուսին : Ու կարծես սեյիդ Հարիրուլլան մասհոգվելու վոչինչ չունի . սովեն ինչ նրա ոգտին , նրա համար և կատարում : Սակայն նա շատ յավ և հասկանում , վոր յերկար դիմանալ չի կարող ոտարչերկրյա կապիտալի ճնշման՝ հանձնիս տնգլիական ծխախոտի ընկերության , ուստի սնհրածեշա և մենաշնորհի Ֆերմանը վոչնչացնել : Այդ կետում հայրենի կալվածատերերի և կապիտալիստների շահերը նուշնանում են : Ու սեյիդը հոգ և պատրաստում : Պայքարի հենակետը շարիաթն և , վորի հադիսները սուրբ էյին յուրաքանչյուր պարսկի համար , անկախ նրա սոցիալական դրությունից : Ու շարիաթի վեհությունը պաշտպանելու բուն աննչով քոզարկված , նա դուրս և կանգնում իր նմանների տնտեսական շահերի պաշտպանության պայքարին :

Ռիզան թեհրանում և : Նա չունի ծանոթներ , չունի սուրբուտի միջոց : Չուր են անցնում նրա բոլոր դիմումները՝ աշխատանք գտնելու : Նա արդեն պատտոտուն և , քաղցած , թափառում և թեհրանի ծածկված շուկայում մուրացկանների ու շների հետ միասին : Նա յեյ բազմաթիվ թշվառների , գերվիչների ու խազ-փուչների նման կանգնած և փոան մոտ , քաղցած հայացքով ազատ հայում և կախված հացերին : Այդտեղ , մի փոքր հեռավում , նստած և խազ-փուչ Ահմադը , վորը փոզոցում պատմ պայուն և ամբացնում իր փանամանի՝ հեռավոր

նմանություն միայն ունեցող շափն : Պատահարաբ նրա հայացքը կանգ և առնում Ռիզայի վրա : Ահմադը յերկար տարիներ և իր ուսերի վրա կրել կյանքի ծանրությունը , նա կյանքի փրկիտփա յե : Նա անիջապես ըմբռնում և Ռիզայի գրությունը , հասկանում և նրա ներքին աշխարհը՝ ուր պայմանների շնորհիվ առաջացած անյեյ գրությունն ու յերիտասարդությունը պայքարում են : Հասկանում և , վոր նա մի պատահական անձ և մուրացկանների շարքում : Ու դանդաղ բարձրանում և նա իր տեղից , մոտենում և փոնչուն ու ստում՝

— Տուր խազ-փուչին իր բաժինը :

Խազ-փուչ Ահմադը գիտե , վոր փոնչին չի համարձակվի իրեն մերժել : Պարսկաստանում խազ-փուչին մերժելը հանցանք և . և խազ-փուչը պահանջում և այնքան , վորքան հարկավոր և իրեն : Խազ-փուչը իր ստուցած բանի մնացորդից մաս և հանում մյուս թշվառներին : Նա ցերեկը հարուստ և , իսկ յերեկոյան նա աչլես վոչինչ չունի : Նա չունի սեփականություն , չունի իր անկյունն ու սաացվածքը . ամբողջ աշխարհն և նրա սուներ , ամբողջ աշխարհն և նրա սեփականությունը : Նա մարդ և միայն , մարդ՝ աղետիվ , բարի , նա դեմ և բուր ճնշումներին , դեմ և մարդ-դադանին , մարդ-գիշատիչին :

Ահմադն ստանում և իր բաժին հացը և մոտենալով Ռիզային , մեկնում և նրան : Ռիզան չիթթված և . նա տաջին անգամ և տեսնում մարդու կազմից աչլպիսի վերաբերմունք : Ազահորեն ուսում և հացը ու խրախուսված Ահմադի վերաբերմունքից , պատմում և նրան իր պլիտով անցած-դարձածը :

Իսկ այդ ժամանակ գյուղում մեռնում և Ռիզայի ճերանի հայրը՝ չդիմանալով իրոտ պատմին : Նազիրը մնում և բոլորովին մենակ : Ու Սեյիդը՝ էրբ Ռիզայի կամքը կատարելու ցանկությամբ՝ նրան տանում և իր մաս և լուր տարածելով , թե Ռիզան մեռել և , իր հորձն և պարձնում :

Հուզմունքը մասայի թե գյուղերում և թե քա-  
ղաքներում մեծանում է ավելի ու ավելի: Ծառնաճի  
մայրաքաղաքը յեփս գլուծ է քաղցի ծանրութունը:  
Փոնչիններն ու անբարդարներն ամեն նր բարձրացնում  
են հացի արժեքը և վատացնում վորակը: Բեյլար-բեյը  
քաղաքի վոստիկանագետը շորհիվ իր ստացած առատ  
վոստիկների, պաշտպանում է նրանց: Մյուս կողմից էլ  
սուլի ծախարկելուն ոժանդակում են Սեյիզն ու իր հա-  
մախո: Կայրամասերը թողցնելով իրենց ունեցած  
հացը:

Սեյիզը Հարիբուլլան գործում է: Մի կողմից նա  
համաձայնութուն և կայացնում անգլյական Ֆիրմայի  
հետ, նրան վաճառելու իր ծխախոտը՝ վորն արդեն  
առանապատկվել է, մյուս կողմից պրոպագանդա յե մը-  
ղում մեծաշնորհի և ընդհանրապես ստոր յերկրացիների  
դեմ: Մեծ Մուշտեյիզը, վոր նույնպես իր հաշիվներն  
ունի՝ ձգտում է ամբողջել հոգևոր իշխանութան անց-  
դեցութունը աշխարհական գործերի վրա՝ համախոս է  
Սեյիզին: Ոգտվելով հավատն ու հայրենիքը պաշտպա-  
նելու իր դիրքից, նա հողեօրականութան, բուրժուա-  
զիայի և նույնիսկ շահիչ շրջապատող բյուրոկրատիայի  
մեջ բոցավանդում է կույր Փանատիզմ, արգելելով ոգ-  
տվել այն ամենից, ինչին դիպել է «անհավատի» ձեռքը:  
արգելելով ծխել, քանի մեծաշնորհը կշարունակվի: Յեվ  
Փանատիկոսների ամբողջը, Սեյիզի գլխավորութամբ,  
արդեն բացարձակ հրապարակ է գալիս չայտանանե-  
րում, մեղաններում, չուկաններում՝ ավերելով ծխախո-  
տավաճառ խանութները, Հարդ ու փշուր անելով ղեյ-  
խանները, ծխամորձերը, վոտրի տակ արօրելով ծխա-  
խոտի կապուկները:

Ռիզան արդեն խաղ-փուշ է. նա էլ այլևս կորցնելու  
փնչինչ չունի: Համազյուզայիներից մեկի հետ պատա-  
հական հանդիպումից հետո, նա արդեն զիտե վողջ ճըլ-  
մարտութունը. գիտե սեյիզի արած օրիկայութունն  
իր կողմ վերաբերմամբ, վորն Ալլահի անունով յերգվել

էր խնամել Նադիրին, մինչև իր վերջարժը: Ռիզան  
ճեղքված է, նա կտտացած է. սակայն ի՞նչ կարող է անել:  
Իսկ չորս կողմ հաղարավոր մարդիկ՝ կյանքի դու հար-  
վածներին յենթակա, պարիաների նման չորունակ թա-  
փառում են հացի փոսերի չուրջը, թափառում են չու-  
կաններում, իրենց ընկերակից քաղցած շների հետ միա-  
սին, մի կտոր ձեռք բերելու հույսով, վորպեսզի գոնե  
մի կերպ յոեցնել կարողանան իրենց հովիտենական  
բացը:

Սեյիզը ստացել է արդեն Մուշտեյիզի հրամանը՝  
ճխին արգելելու մասին: Ու այն մամանակ, յերբ բազ-  
մահազար բացած ամբողջ խաղ-փուշներ Ահմադի ու  
Ռիզայի առաջնորդութամբ ավերում է չուկան, փրո-  
ներն ու ամբարները, Սեյիզը բաղմահազար Փանատի-  
կոսների ամբողջի գլխի անցած, հայտարարում է Մուշ-  
տեյիզի հրամանը: Վո՞ր հավատացալը կարող է հա-  
կառակ ընթանալ Մուշտեյիզի անկը հրամանին, սկսած  
մուրացկանից, մինչև Մադր-Ալլամը:

Ու յերկու հսկայական ամբողջ, տարրեր ճանա-  
պարհներով ու տարրեր ցանկութուններով, անսելի ա-  
լիքների նման առաջ է գլորվում, իր ճանապարհին մաք-  
րել-սրբելով այն ամենն, ինչ իր կարծիքով պատճառ է  
թշվառութան, մեկը պահանջելով հաց և արդարու-  
թյուն, մյուսը՝ մեծաշնորհը վերացնել:

Մայրաքաղաքը սարափի մեջ է: Մադր-Ալլամը և  
Բեյլար-բեյը դուրսնները կորցրել են: Նրանց համար  
Փանատիկոսների ամբողջը վտանգավոր չէ. նրանք վա-  
խենում են խաղ-փուշներից, վորոնք մասամբ կազմա-  
կերպված ում հանդիսանալով, գնում են վոչ թե մե-  
ծաշնորհի ախտի դեմ, վորովհետև նրանց համար մին-  
նույն է, թե վո՞ր կապիտալն է իրենց ճնշում՝ հայրե-  
նական թե ոտար յերկրյա: Նրանք գնում են ընդգեմ տի-  
րոզ կարգերի, ընդգեմ կապիտալի ընդհանրապես, ընդ-  
գեմ բյուրոկրատիայի և բուրժուազիայի. համարիտ է,  
զի՞ն յնիս լուսննալով պարզ ծրագիր, սակայն հավատա-

բության և արդարության տարերային յոգունդներով :  
Չհամարձակվելով բացարձակ կերպով գուրս դալ այդ  
ուժի դեմ , Սաղբ-Աղամն ու Բեյլար-Բեյլը դիմում են  
պրովակացիայի : Պաղ-փուշների գիշերատեղին զգամ  
գիակը՝ սարրազների սպայի տարագրով՝ առիթ կտա նը-  
րանց պատասխանապատժյան կանչելու՝ սպանության  
մեջ մեղադրելով :

Սակայն կան նաև ուրիշները , վորոնց յերբն ք շի  
ժպտում այդ ամեն ինչ խորտակող ուժը , բայց վորոնց  
ձեռնառ չե այն սղտագործել հոգուտ իրենց : Դա սե-  
յիւն է—հայրենի բուրժուացիայի և կայսրածատերերի  
ներկայացուցիչը :

Յեզ այն ժամանակ , յերբ խաղ-փուշները Սեյիդ  
Համզայի ավերակ մեջնտի պատերի տակ գիշերելու յեն  
պատրաստվում , այդ յերկու սատանայական ուժերը՝  
բյուրուկրատիան և հայրենի կապիտալիզմը՝ անխոնջ աչ-  
խատում են : Այն ժամանակ , յերբ սարրազները ավե-  
րակների մեջ զգում են գիակը , այդ իսկ ժամանակ սե-  
յիւր խաղ-փուշներին կոչ և անում զնալ իր յետևից հա-  
նուն շարիաթի , վերականգնելու հավատացյալների  
փսանահարված իրավունքները , զչելու յերկրից անհա-  
փատներին , կոչ և անում միանալ ընդդեմ հայրենիքի  
թշնամիների : Սակայն Ռիզան արթուն է . նա պարզում  
և սեիդի իսկական դեմքը ու հարձակվում է նրա վրա ,  
հոր , կնոջ , իր կրամ տառապանքների վրեժը լուծելու ,  
վրեժ լուծելու այն բոլոր թշվառությունների համար ,  
վորին յենթակա յեն իր նման հաղարալորներ , միլիոնա-  
փորներ : Չեռք բարձրացել է , մի պահ—և նազիրի վը-  
րեժը կլուծվի , բայց գիակի լուրը՝ վորն սպանում է  
խաղ-փուշների համար նոր թշվառությունների նոր  
զուտ բանալու՝ յեա և մզում անձնականը : Պաղ-փուշ-  
ներն այլևս համոզված են , վոր հասել է ժամը բացար-  
ձակ հրապարակ գալու , յեթե չեն ցանկանում շահի ար-  
բանյակների կրունկների տակ վոչնչանալ ընդմիջա :  
Ու Ռիզան ընտղաբար անցնում է խաղ-փուշների գը-

լուխ : Նա կոչ և անում ժուրացիկի ցուպը փոխել սու-  
տերի : Նա մոտանում է իր անձնականն այլևս , նա բոցո-  
փատում է համամարդկային վրեժի զգացումը : Հարի-  
բուլլան փոխված արամպությունն սղտագործում է  
և տհա խաղ-փուշների հսկա ամբուր տարերային կեր-  
պով հարձակվում է անդլիական միտիայի վրա :

Անդլիական միտիայում հերթական քաղաքական  
ստուտ է : Սաղբ-Աղամը՝ չըջպատված անգլուհինե-  
րով , իրեն յոթերորդ յերկնքում է գլխով : Հոտում են  
ճառերը , հոտում է խմիչքը : Չույգերը պատվում են  
թովիչ յերաժյաության տակաով : Բայց ահա խաղ-  
փուշների ամբուր հսկա այլքի պես գլուխվելով , մոտե-  
նում է : Նեոված քարը փչրում է գահլիճի ապակին ,  
ընկնում հյուրասեղանի վրա : Եփոթ , վախ : Դարպաս-  
ները պոկված են . խաղ-փուշները ներս են թափվում ա-  
մեն կողմից : Պաշտպանության կանչված սարրազները  
չըջպատում են նրանց : Ռիզան բլուրից ատաջ է : Նա  
վեսպանին մոտ է գտնվում : Չեռք մեկնում է : Դեռպո-  
նը վախից կծկված է : Բարձրացած բուռնցքն իջնում է  
նրա գլխին , սակայն վրա հասած սարրազները բռնում  
են Ռիզային : Ռիզան ձեբբակալված է : Պաղ-փուշները  
ճնշված են :

Սաղբ-Աղամը գլուխը կորցրել է : Նախարարական  
նիստ է գումարել , ընկելու ստեղծված զրությունը :

Իսկ գլուղում նազիրը , թոչնակի պես բանտարկ-  
ված է սեյիդի տանը : Նա չի կարողանում մոտանալ իր  
Ռիզային . արցունքները անկանդ հոտում են նրա նշածն  
սե աչքերից , վորոնց մեջ վիշտը՝ մեծ ու խորը՝ թառել  
է վախիտա : Այդում աչխատում է այն գլուղացին , վորը  
բողոքում տեսել է Ռիզային և հասկացել է սեյիդի խա-  
րեքսյությունը : Նա առիթ է փնտրում նազիրին հազոր-  
դելու այդ լուրը : Ու հարմար ժամանակին նա նա-  
զիրի հետ միասին փախչում է քաղաք : Գնում է նա-  
զիրն իր սիրելի Ռիզային գտնելու , գնում է նրա թշվա-  
րյանը բաժանելու :

Ամերականքի մեջ խոյ փուշները խորված Ահմադի շարժը, նրանից սպանում են գործում, հետագա անկիբի կարգադրութուն: Նրանք հուզված են, նրանք կորցրել են Ռիդային, փորն աշուկես թանկ և արդեն իրենց, փորն իրենց կամքի ու ցանկութունների թարգմանն և հանդիսացել: Հանկարծ յերևում է Նազիրը: Նա պահանջում է փերադործնել իր Ռիդային: Առ Նազիրի յերեվար բախական և լինում է յերթորականացած արամազրութունների բոնկման համար: Ահմադի համար արդեն խոյիբը պարզ է: Նա փութի յե յերևում ու խոյփուշները դիմված Մահակներով, սրերով, գանակներով, քարերով՝ հետեվում են նրան:

Յնի արդարության դոյությանն ազդարարող դրաշակը ձեռքին՝ Ահմադն առաջնորդում է նրանց դեպի բանտ՝ ադատելու Ռիդային, ազատելու կապկապված կամքն իրենց:

Մինխարական խորհրդի շենքի Մոս կուսակիված և փանտախիտների ամոխը, սեյիդի առաջնորդությամբ, նրանք պահանջում են ներս թողնել սեյիդին մինխարական խորհուրդ, ուր Ռեյյար-Ռեյը գեկուցում է ստեղծված կրոնի ժաման: Մադր-Ազամը շիտված է, նա չգիտե ինչ անել: Նա ամենից ավելի սուկում է շահնաշի յարկութունից: Իսկ պուսազ կանսու ի յերթնարապական ժպտում է — բանի պզտորվի զուրն, աշիբան տոտու կլինի իր գործը:

Մադր-փուշները խորտակում են լանսար: Ռիդան ապառ է: Ռիդան անցած խոյփուշների գլուխ, առաջնորդում է նրանց դեպի պարտա՝ փերջ մայրու տիրող անարդարության:

Սեյիդ Հարիրուլլան մինխարական խորհրդում է: Նա պահանջում է փոշիացնել մենաշնորհի Փերմանը, պտադործելով խոյփուշների ուժը, փորոնք ևս իրր նու ի պահանջն են դնում:

Մադր-Ազամը գիծում է: Եսնն ստորագրում է մեռաշնորհի փերացման հրամանը: Հարիրուլլան հաղթանակ

կան՝ հայտարարում է ժողովրդին շահի վողորմածությունը, սակայն նրան դիմավորում է խազ-փուշների մուսուլ շղթան, նրանք արդեն լավ են ճանաչում սեյիդի յերկդիմությունը, նրանք պահանջում են իրենցը՝ արդարություն, և հաց, պահանջում են զսպել բյուրոկրատիային, բուրժուազիային:

Զիջեւով սեյիդին, պետական կլիկան արդեն նրանից է ոգնություն սպասում: Զեռքը ձեռք է լվանում Սեյիդն հաղթանակել է, նա առաջալևս քաշվելու վոչինչ չունի, նրան այլևս պետք չեն խազ-փուշները: Թեվ նրա նշանով իր թիկնապահը զաղտագողի մոտենալով, սպանում է խազ-փուշների առաջնորդին՝ Ռիդային իսկ սարքազները շրջապատում են նրանց:

Խազ-փուշները հերոսաբար մարտնչում են Սեյիդն ընկնում է նրանց նետած քարերից, թաղվելով քարակույտի տակ: Նրա թիկնապահն սպանված է:

Բյուրոկրատիան՝ կալվածատերերի և բուրժուազիայի աջակցությամբ հաղթանակում է այս անգամ, սակայն նահանջող խազ-փուշները հաղթված չեն: Նրանց ուժք շարունակում է սավառնել հարստահարողների գլուխների վրա և Ահմադի բերանով ազդարարել Ռիդան մեռել, սակայն ժողովուրդը դեռ կենդանի յե և կգահատուցման ժամը:

ԳԻՆԵ Ե 20 ԿՈՊ.

Հ. Ս. Ր. Հ.

ԱԿՑԻՈՆԵՐԱԿԱՑ ԸՆԳԵՐՈՒԹՅՈՒՆ  
ՀՍԹԿԻՆՈ

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ , , ՀՍԹԿԻՆՈ , , -Ի

« Ազգային գրադարան



NL0307943

